

**ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի այցը ԶԶ
Արագածոտնի մարզ**

Ապրիլի 22-ին ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարար Դավիթ Լոքյանը տեղակալ Կարեն Իսախանյանի, տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանի հետ աշխատանքային այցով եղավ Արագածոտնի մարզում:

Մարզպետ Գաբրիել Գյոզալյանի ուղեկցությամբ նախարարն այցելեց Ծաղկահովիտ եւ Ապարան համայնքներ, հանդիպեց տեղի համայնքների ղեկավարների հետ: Մարզպետն ընդհանուր գծերով ներկայացրեց համայնքների նկարագիրը, առկա հիմնախնդիրները: Հիմնական հարցերից մեկը համայնքների խոշորացման ծրագրի նկատմամբ համայնքապետերի կարծիքն ու տրամադրվածությունն էր: Համայնքների ղեկավարները ներկայացրին իրենց համայնքների խնդիրների լուծման հնարավոր տարբերակները: Նախարարը լսեց առաջարկությունները եւ նշեց, որ մարզպետի հետ համատեղ ծրագրեր կմշակվեն համայնքների զարգացմանը նպաստելու համար:

Ծաղկահովիտում այցելություն կատարվեց տեղի հիվանդանոց, որը 10 000-ից ավելի բնակիչների է սպասարկում: Ծանոթանալով շենքային անմխիթար պայմաններին, ղեկավարները պայմանավորվեցին հարցը քննարկել առողջապահության նախարարության հետ եւ հիվանդանոցի գործունեության համար առավել արդյունավետ տարբերակներ ընտրել: Այդ թվում՝ չբացառվեց հիվանդանոցի ծավալների փոքրացման հարցը, որը կբարձրացնի օգտակար գործողության գործակիցը:

Ի դեպ, հիվանդանոցի վիրաբույժը սիրիահայ է՝ Բյուզանդ Քահքեջյանը, ով երեք տարի է, ինչ տեղափոխվել է Հայաստան: Վերադառնալուն պես՝ նա դիմել է առողջապահության նախարարություն եւ նրանց օգնությամբ տեղավորվել Ծաղկահովիտում:

Նախարարի հաջորդ կանգառը Ապարանում էր: Այստեղ քննարկվեց կոոպերատիվների եւ ասոցիացիաների ստեղծման հարցը, որոնք մեծ ծավալով կարող են գյուղատնտեսական արտադրություն ապահովել՝ մսամթերք, կաթնամթերք: Դա

հնարավորություն կտա տարածքում լրացուցիչ ձեռնարկություններ բացել եւ նոր աշխատատեղեր ստեղծել: Ապարանի տարածաշրջանի համայնքապետերի բարձրագրած խնդիրները նույնն էին՝ մանկապարտեզ հիմնելու հարց, դպրոցի վերանորոգման, ճանապարհների բարեկարգման խնդիրներ, որոնց վերաբերյալ նրանք ստացան պարզաբանումներ, նշվեցին առաջիկայում դրանց լուծման հնարավոր տարբերակներ: